# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՋՈՐՋ ՏՈՒՆԱՅԱՆՑԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃՈՐՃ ՏՈՒՆԱՅԵԱՆՑ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

Համայն հայութեան հաւատի նուիրական օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ եւ բարձր գնահատանքով անդրադառնում Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր բարի եւ մեծարժէք ծառայութիւններին:

Մեծարգոյ պրն Տունայեանց, մեծապէս ուրախ ենք, որ առիթ ենք ունեցել անձնապէս ճանաչելու Ձեզ, Ձեր ազնիւ Տիկնոջը եւ հաղորդ դարձել ազգասէր ու եկեղեցանուէր Ձեր ոգուն: Բարի եւ Աստուածահաճոյ գործերում մշտապէս միմեանց զօրակից, Դուք Ձեր աւանդն էք բերում ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի եւ Մայր Եկեղեցու պայծառութեանը, հայրենի մեր երկրի շինութեանը եւ հայրենաբնակ հայորդիների բարօրութեանը:

Ձեր յանձնառութիւնը Մայր Եկեղեցու կեանքում, մեծագումար նուիրատուութիւնները Փասադենայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն, ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, ինչպէս նաեւ Ձեր աջակցութիւնը բարեսիրական ծրագրերի իրականացմանը խօսուն արտայայտութիւնն են առ Աստուած Ձեր հաւատի եւ առ լուսաւորչապետ մեր Սուրբ Եկեղեցին Ձեր որդիական սիրոյ:

Մեծարգոյ պրն Տունայեանց, գոհունակ սրտով բերելով Ձեզ Մեր օրհնութիւնը եւ սիրով ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը Իր հանապազ օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ Ձեր հաւատաւոր ընտանիքի բոլոր անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Մարտի
Յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 155